ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 02 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 00097

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Սասուն Ավետիսյան***
ք.Երևան, Դավիթ Անհաղթ փողոց 14/16 և 14/17, Կ.Ուլնեցի փողոց 32/33

Գործունեությունը՝ ***Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթ փողոց 14/16 և 14/17, Կ.Ուլնեցի փողոց 32/33 հասցեներում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 00097

<<02>> 11 2020թ.

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դավիթ Անհաղթ փողոց հ.14/16 և հ.14/17, Կ.Ուլնեցի փողոց հ.32/33 հասցեներում բնակելի համալիրի կառուցման շրջանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	քաղաքացի Սասուն Ավետիսյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ըստ նախագծի բնակելի համալիրի կառուցումը քաղաքացի Սասուն Ավետիսյանի կողմից նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթ փողոցի հ.14/16 և հ.14/17, Կ.Ուլնեցի փողոց հ.32/33 հասցեներում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 13534.0մ^2 ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակված և համապատասխան փորձաքննություն անցած նախագծով:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակը բնակելի շենքի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Բնակելի համալիրը նախատեսվում է իրականացնել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթ փողոցի հ.14/16 և հ.14/17, Կ.Ուլնեցի փողոց հ.32/33 հասցեներում: Կառուցապատողներ են ներկայացված Լյովա Պետրոսյանը, Սասուն Ավետիսյանը և Լիանա Հովհաննիսյանիը,որոնց պատկանող հողամասերը գտնվում են քաղաք Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դ.Անհաղթ փողոցի հ.14/16 և հ.14/17, Կ. Ուլնեցու փողոցի հ.32/33 հասցեներում:Կառուցապատողների անունից հանդես է գալիս Սասուն Ավետիսյանը: Հողամասերը կառուցապատված չեն, իրենցից ներկայացնում են 13534,0մ^2 ընդհանուր

մակերեսով շեղանկյունաձև թեք տարածք՝ 160,0x71,0 չափերով, պարփակված են ստորին և վերին հատվածներում փակուղային ճանապարհներով: Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների կամ կենսաբազմազանության տեսակների հետ: Կառուցապատվող շինությունը նախատեսվում է մեկ ընդանուր համալիր՝ չորս մասնաշենքից: Ստորգետնյա չորորդ և հինգերորդ հարկերը՝ ավտոկայանատեղիներ են, ստորգետնյա երորրդ, երկրորրդ և առաջին հարկերի մի մասը հասարակական օգտագործման տարածքներ են: Վերգետնյա հարկերը բնակելի են:

Կառուցապատվող շինության նախագծային հզորության տեխնիկական տեսական տվյալները ներկայացված են ստորև:

Նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքից՝ արտաքինից քարի և ապակյա երեսապատմամբ, բնակչության տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործունեության պայմանների ապահովմանն ուղղված անհրաժեշտ լուծումներով, շրջակա միջավայրի և քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված ինժեներատեխնիկական միջոցառումներով՝ ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Տվյալ միջավայրում այն ներդաշնակ է շրջակա կառույցներին:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունն ընտրվում է մրցույթով:

Շենքի միացումն արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Մոտեցող ավտոճանապարհների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վարձակալել այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը առաքվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն 19.03.2015թ. ՀՀ կառավարության N 596-Ն որոշման 111, 113 կետերի և ՍՆԻՊ 1.04.03-85* II մասի՝հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 27 ամիս՝ հաշված շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում՝ Ե/բ հիմքերի տեղադրման համար: Կատարվելու է մոտ 15500 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 1260մ³ հետլիցք (այն կարճաժամկետ կպահվի շինհրապարակում), 14240մ³ մնացորդային քանակները ավտոինքնաթափերով ամբողջությամբ տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ՝ ըստ տեխնիկական պայմանի:

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով և տարաներով:

Աշխատողների կենցաղային պայմաններն ապահովելու համար տարածքում տեղադրվելու են բիոզուգարաններ, որոնց սպասարկումը իրականացվելու է մատակարար կազմակերպության կողմից:

Էլեկտրամատակարարումը իրականացվելու է ըստ էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի, որի համաձայն լիցենզավորված կազմակերպության կողմից իրականացվելու է նախագիծ և համակարգը միացվելու է էլեկտրամատակարարման ցանցին :

Շենքերի գազաֆիկացումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ տեխնիկական պայմանների համաձայն:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում, ծառատունկ և կանաչապատում, որի համար օգտագործվելու են բացառապես տեղանքին բնորոշ, Երևանյան լանդշաֆտին համապատասխան բուսատեսակներ և ծառատեսակներ: Նախագծով նախատեսված կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ, ծաղկասածիլ, ծառատունկ:

Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 5413.6մ²:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Տարածքում նախատեսվում է տնկել նախնական իլենի գնդաձև-25հատ, ասպիրակ – 23հատ, ֆորզիցիա – 12հատ, սիրիական վարդ – 16 հատ, դրախտածառ – 5 հատ, հուդայածառ – 1 հատ, սամշիտ – 235գծ.մ:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու կամ տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կամ ավտոցիստեռներով՝ նախապես կնքելով պայմանագիր:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- բոլոր մակերեսների, ներառյալ, ժամանակավոր օգտագործված տարածքների վերականգնում՝ մինչև սկզբնական վիճակը,

- շինհրապարակից ամբողջ շինարարական աղբի, նյութերի մնացորդների և սարքավորումների հեռացում,

- թփերի և ծառերի վերատնկման վայրի և քանակի համապատասխանեցումը դենդրոնախագծի պլանի հետ՝ ապահովել թփերի 90% կպչողականությունը,

- այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ,

- փոշու տարածումը կանխող ցանցերի օգտագործում,

- շինարարական աշխատանքների համար տեխնիկական որակի ջրի օգտագործում՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,

- ջրցանի ծավալները հաշվարկվելու են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- նախատեսվում է տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին,

- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա, որոնք ապահովված կլինեն հոսակորուստների հավաքման համակարգով,

- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահվելու են հատուկ անթափանց և փակ տարաներում, հետագայում որպես երկրորդային հումք՝ օգտագործելով շինարարության ընթացքում թույլատրելի աշխատանքների համար կամ հանձնել լիցենզավորված վերամշակող կազմակերպություններին,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգվելու և վերականգնվելու է և առաջացած թափոնները մաքրվելու են՝ այն տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

- շինհրապարակում բացառվելու են թափոնների ժամանակավոր կուտակումները և տեղափոխվելու են հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,

- վտանգավոր թափոնները հանձնվելու են այն ընկերություններին, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման լիցենզիա,

- նախատեսվում է շինանյութերի ձեռք բերումն իրականացնել միայն լիցենզավորված մատակարարներից,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու են ցերեկային ժամերին,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին,

- խուսափելու են աղմկահարույց մեքենաների ու սարքավորումների օգտագործումից և պարտավորվում են ապահովել համապատասխան խլացուցիչներով:

Բնապահպանական կառավարման պլանում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով նախատեսվում է իրականացնել կանոնավոր մոնիթորինգ, որի համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 360.000 ՀՀ դրամ /ամբողջ շինարարաության ընթացքում 810000 դրամ:/

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են արտակարգ իրավիճակների նախարարությունը, կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:
- Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:
- Ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Իրականացնել շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:
- Ժամանակավոր պարսպապատել շինարարական հրապարակը, իսկ կառուցվող շենքերը և շինությունները պարփակել շինարարությանը համապատասխան բարձրության ցանցով:
- Լվանալ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը, իսկ կեղտաջրերը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման ցանցին:
- Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է պատշաճ կերպով իրականացնել ջրցանման աշխատանքները, նվազագույնի հասցնելով փոշու առաջացումը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN ENVIRONMENTAL EXPERTISE CENTER

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Սասուն Ավետիսյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դավիթ Անհաղթ փողոց հ.14/16 և հ.14/17, Կ.Ուլնեցի փողոց հ.32/33 հասցեներում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան